

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
27.02.2015թ. խորհրդի նիստի

Նախագահ՝ Ֆ. Յուլակյան

Քարտուղար՝ Է. Հովհաննիսյան

Խորհրդի 24 (քսանչորս) անդամից ներկա էին 16-ը (տասնվեց):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի 2014թ.-ի տարեկան գործունեության հաշվետվություն:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ղեկավար, պրոֆեսոր Վ. Գրիգորյան

2. ԳՊՄԻ-ի 2015թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ղեկավար, պրոֆեսոր Վ. Գրիգորյան

3. ԳՊՄԻ-ի 2015-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան 2015թ.-ի աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ղեկավար, պրոֆեսոր Վ. Գրիգորյան

4. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը, բացելով խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2014թ.-ի տարեկան գործունեության հաշվետվությունը (**Զեկ.**՝ ԳՊՄԻ-ի ղեկավար, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ԳՊՄԻ-ի ՊՈԱԿ-ի 2014թ.-ի գործունեությունը միտված է եղել որակի մշակույթի ձևավորմանը՝ հաշվի առնելով արտաքին ու ներքին միջավայրային փոփոխությունները: Նման մշակույթի ձևավորման հանդեպ ուշադրությունը գլխավորապես պայմանավորված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ ունեցող շրջանավարտների թողարկման հասարակական պահանջով:

Ռեկտոր Վ. Գրիգորյանը ներկայացրեց բուհի գործունեության ներքոհիշյալ կետերին վերաբերող որակա-քանակական վերլուծական պատկերը.

- կրթական գործունեություն,
- ուսանողներ,
- պրոֆեսորադասախոսական ու ուսումնասօժանդակ կազմ,
- հետազոտություն ու զարգացում,
- արտաքին կապեր ու համագործակցություն,
- հասարակայնության հետ կապեր և լրատվություն,
- գիտական գրադարան,
- որակի ներքին ապահովում,
- ֆինանսական հաշվետվություն:

Նա նաև նշեց, որ հաշվետու տարին բուհի համար եղել է հոբելյանական. լրացել է բուհի հիմնադրման 80-ամյակը, որը նշվել է հանդիսավորությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆ. Յուլյանը, Ս. Ավետիսյանը, Ս. Մինասյանը, Ա. Բաղրամյանը, Ա. Մկոյանը:

Ֆ. Յուլյանը շնորհակալություն հայտնեց Վ. Գրիգորյանին՝ ներկայացված հաշվետվության համար և խնդրեց առանձնացնել ինստիտուտի համար հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները:

Վ. Գրիգորյանը նշեց, որ ինստիտուտի սոցիալական հիմնախնդիրները ռեկտորատի ու գիտխորհրդի նիստերի քննարկման մշտական առարկան են: Նրա խոսքերով՝ ինստիտուտի առաջիկա հավատարմագրման գործընթացը բուհի համար ունի առաջնային նշանակություն: Բացի դրանից, մոտ ապագայում հնարավոր է ինստիտուտի նոր կարգավիճակի՝ համալսարանի ձեռքբերում: Գյումրին, առավել ևս Շիրակի մարզը, արժանի է ունենալ հզոր համալսարան: Համալսարանի հիմքը դնելիս ռեկտորը չբացառեց համակարգային արմատական փոփոխությունները՝

մասնավորապես վերաբերվող ինստիտուտի հեռակա ուսուցման համակարգին: Որպես այլընտրանքային առաջադեմ ուսուցման ձև արժևորեց հեռավար ուսուցման մշակույթի ձևավորումը, որն իրատեսական է ինստիտուտը համապատասխան նորագույն տեխնիկական սարքավորումներով ապահովելու պարագայում: Այդպես հնարավոր կլինի հաղթահարել տարածքի ու ժամանակի սահմանափակումները: Բացի դրանից, խնդիրներից հիշատակեց դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը: Համալսարան դառնալու դեպքում պետք է ուսումնասիրել շուկան ու, ըստ այդմ, ձևավորել մասնագետների պատրաստման գործընթացը:

Ֆ. Ցոլակյանը դրական գնահատեց վերջին շրջանում ինստիտուտում կատարված բարեփոխումները, որոնց շարունակականությունը կբարձրացնի ինստիտուտի դրական համբավը: Արդյունքում կշահեն ինստիտուտի աշխատակիցները, ուսանողները և, իհարկե, ողջ հասարակությունը: Հայ իրականությունում հաջողության հասնելու համար կան համապատասխան մարդկային ռեսուրսներ՝ ներուժ ունեցող հրաշալի երիտասարդ-ուսանողներ: Ինչ վերաբերվում է խնդիրներին, ապա դրանք անվերջ են: Պարզապես դրանց լուծման համար առաջարկեց բարձրացնել աշխատակիցների սոցիալական պատասխանատվությունն ու լավատեսությունը:

Ս. Ավետիսյանին հետաքրքրում էր աշխատաշուկայում զբաղվածությունն ունեցող ԳՊՄԻ-ի շրջանավարտների մասնաբաժինը: Վ. Գրիգորյանը պատասխանեց, որ բուհում գործող բուհ-գործատու համագործակցության կենտրոնը մոտ ապագայում պատրաստվում է իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն, որի խնդիրներից մեկն ուղղված կլինի այդ հարցի պատասխանի պարզմանը:

Ա. Մկոյանը խոսեց իր կողմից գրի առնված մի քանի նկատառումների մասին: Ռեկտորի հաշվետվությունն ինչպես նրա,

այնպես էլ ողջ ինստիտուտի ծավալած գործունեության արդյունքն է: Ներկայումս կրթության համակարգում կատարվում են լուրջ բարեփոխումներ. նախկին ավանդական ուսուցման մեթոդները փոխարինվում են նոր մեթոդներով, վերջնական կրթությունն իր տեղը զիջում է անընդհատ, ցկյանս կրթությանը: Բուհը՝ որպես ամբողջական համակարգ, անընդհատ հարկադրված է արձագանքելու կտրուկ միջավայրային փոփոխություններին: Հետապնդելով որակյալ կադրեր պատրաստելու նպատակը՝ ինստիտուտում ներդրվել ու անընդհատ բարելավվում է կրեդիտային համակարգը, պրոֆեսորադասախոսական կազմը համալրում է որակյալ երիտասարդ մասնագետներով, ինչպես նաև ժամանակակից նյութատեխնիկական բազայով: Վերջին տարիներին էապես ընդլայնվել է ինչպես աշխատանքների ծավալը, այնպես էլ աշխատանքի որակի հանդեպ ներկայացվող պահանջները: ԳՊՄԻ-ում դիտելի դրական երևույթների կողքին առանձնացրեց նաև բացասական երևույթները՝ ընդգծելով, որ ինստիտուտի բարեփոխումները դեռ չեն դարձել ողջ անձնակազմի սեփականությունը, սակայն աշխատանքների ռացիոնալ կոորդինացումը կնպաստի խնդիրների լուծմանը: Գնահատելով բուհում կատարված աշխատանքները՝ առաջարկեց ինստիտուտի 2014թ.-ի գործունեությունը գնահատել բավարար:

Ա. Բաղրամյանը հիմնականում խոսեց միջազգային համագործակցության ծրագրերում ինստիտուտի ակտիվ մասնակցության, կազմակերպության ներքին միջավայրում գործավարության մշակույթի արդիականացման ու կադրերի անընդհատ վերապատրաստմանն ուղղված գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2014թ.-ի գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2015թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի

հաստատում (Ձեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Յ.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2015-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան 2015թ.-ի աշխատանքային պլանի հաստատում (Ձեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի 2015-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան 2015թ.-ի աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ